Նաչի եւ բալի խարջն չատ ծանդր ա,
Եւ նոցին սիրողքն կարի յոյժ չատ ա.
Բայց տպարանն չատ սիրող չունի,
Որ խարջն փոքր ա, ամսէն չորս ռուփի:

Աչխարհասէրն գիրքն ի՞նչ կառի,
Կասի. գրքէրն մին փեսայ չաժի.
Նաչում վերկածի բուռ-բուռ ռուփի,
Տակաւին էն ողջ փոքր կ'համարի:

Տպարանն էլ լէք մոլեաց կխրատի,
Իւր թչնամեացն կպարացանի.
Մանկանի միջում խիստ լէք կճնչի,
Ա՛խ քաչել կտար վասն հոգւոյ ցաւի:

Քանզի գրիչն չատ զալում զադ ա,
Թէպէտ մին չնչին անչունչ թեփուռ ա,
Սարէր կփչրի, մարդի սիրտն ի՞նչ ա,
Թէ մինն քովլի, կարծես խելօք ա՞:

Խսքանն բան է, գնա քո գործին,
Միչտ բարեկամ լեր դու տպարանին.
Նա ակնկալ չի խղջերի փողին,
Դեռ չատ բան կ'ասեմ ի ժամանակին:

1916 1929 թ.
Նոր-Ջուղա-Օրեւսա:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՀՆՉԸՐԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Է ē:

Միեւնոյն բառը մենք ունինք երեք կերպարանքով. հայր, հար, հէր: Դասական այ խումբը բարբառների մէջ ունի իր զուգահեռն իբր ա եւ է: Ժողովրդական երգն ասում է.

Քէլէ, քէլէ, քէլքով աղջիկ,
Քանց քու մէրը խելքով աղջիկ:

Մենք այստեղ տեսնում ենք «քայլէ, քայլք եւ մայր» ձեւերը, որ այ խումբի փոխարէն ունին է: Դրանց զուգահեռ ուրիշ բարբառներ ասում են. «քալէ, քալք, մար»: Լօռեցին (հին Տաշիրք) ասում է. «գէր ոչ, գնէր ոչ», այսինքն «չէր գալիս, չէր գնում»: Սրանք դասական «ոչ գայր, ոչ գնայր» ձեւերն են «ոչ» ժխտականի յետադաս գործածութեամբ եւ այ խմբերի իբր է ամփոփումով: Դրանց զուգահեռ մենք ունինք «գար, գնար» ձեւերը: Երեւոյթը հանրածանօթ է, ուստի աւելորդ եմ համարում օրինակները բազմապատկել:

Ես հարց եմ տալիս. — Ի՞նչն է պատճառը, որ մենք ունինք միեւնոյն բառի երեք տարատեսակ ձեւեր: Ի՞նչպէս պէտք է մեկնել այ, ա, է ունեցող զուգահեռ կազմութիւնները:

Այս երեւոյթի մեկնութեան համար կարող ենք նախ երկու ենթադրութիւն անել. ա. Հէր եւ հար ձեւերը ծագում են դասական հայր ձեւից, հետեւապէս այ > ա ‖ է փոխանցումը կատարուած է գրերի գիւտից յետոյ: բ. Հէր եւ հար ձեւերը դասական հայր ձեւից չեն ծագում, այլ երեքը միասին ծագում են մի նախագրական ձեւից: Մենք իրաւունք ունինք այս երկրորդ ենթադրութիւնն անելու, քանի որ ոչ ոք կարող է ստուգապէս ասել թէ մեր հին բարբառների մէջ, դասական չրջանին, չկայի՞ն արդեօք հէր եւ հար ձեւերը, որ սակայն գրով մեզ չեն աւանդուած, որովհետեւ գրաբարի հիմքը կազմող բարբառին չեն պատկանած: Նրանք մեզ հասած են բերանացի աւանդութեամբ: Գրաբարն ունի. հարf, մարf, եղբարf, որ ենթադրում են հար, մար, եղբար եզակի ձեւեր. կամ առնուազն այդ յոգնակի ձեւերն ապացոյց են, որ այ > ա փոխանցումը նախագրական հնութիւն ունի:

Գիտունները ենթադրում են, որ մեր լեզուական ընտանիքի նախաւոր ձայնաչարը ունեցած է կարճ ու երկար ձայնաւորներ: Մեր լեզուն, որ այդ ընտանիքի անդամներից մէկն է համարւում, ենթադրում եմ թէ նոյնպէս ունէր կարճ ու երկար ձայնաւորներ, հետեւապէս նաեւ կարճ ու երկար ա (a, ā): Ենթադրում եմ նաեւ, որ այդ ա-երը երեք տարբեր երանգ ունէին. արեւմտեան կողմերը հնչում էին չատ բաց, արեւելեան կողմերը չեղ, ինչպէս ա ձայնը հնչում է պարսկի բերանում بَ բառի մէջ. իսկ կենդրոնում նրանք միջակ բացութիւն ունէին: Արտաբերումներից մէկը ես անուանեցի չեղ, նկատի ունենալով բերանի եւ ծնօտների չեղ դիրքը այդ ձայնի արտաբերութեան ժամանակ:

Գիտունները հայր բառի համար վերականգնած են մի ենթադրական նախաւոր ձեւ. patēr[1]: Համեմատելով այդ երկու ձեւերը, մենք տեսնում ենք, որ նախաձեւի p-ն մեր միջավայրում տուած է h, միջին t-ն փոխարինուած է յ-ով, իսկ վերջին ձայնաւորը սղած է եւ կորած: Ենթադրում եմ, որ մեր միջավայրի մէջ երկրորդ ձայնաւորը հնչում էր ա երանգով, ինչպէս գոթ. fadar, պարսկ. پِدَر եւ սանսկ. pitár կչիռների մէջ: Ցուցադրութեանս պարզութեան համար ես առնում եմ մի նախաձեւ, ուր p-ն դարձած է h. ես ստանում եմ *hատար: Այս նախաձեւից ծագած եմ համարում մեր երեք ձեւերը. հայր, հէր, հար:

Յոյն μήτηρ բառի նախաձեւը երկար ա ունէր առաջին վանկի մէջ — μᾶτηρ. ենթադրում եմ, որ մեր hատար նախաձեւի առաջին վանկն եւս մեր հայրենիքի արեւմտեան կողմերում հնչում էր երկար եւ չատ բաց, իբր hա'-տար: Արդ՝ եթէ փորձէք այդ բառն արտաբերել առաջին ա-ը լայնաբաց բերանով ու երկար, դուք կը նկատէք, որ դժուարութիւն ունիք տ-ը արտաբերելու: Բոլոր տեւական ա-երի արտաբերութեան ժամանակ լեզուն մնում է անչարժ. մինչդեռ տ արտաբերելու համար նա պէտք է բարձրանայ եւ աւելի կամ պակաս զօրութեամբ հպի ատամնաչարին: Ա-ն իր բնութեամբն իսկ նպաստաւոր չէ հետեւորդ տ-ի արտաբերութեան համար: Եթէ բառն արտաբերէք իբր hա-տար, կարելի է դեռ տ- արտաբերել, բայց եթէ արտաբերում էք կից, այսինքն առանց ընդհատումի փորձում էք հանել երկրորդ ձայնաւորին, այն ժամանակ տեսնում էք, որ լեզուն փորձում է բարձրանալ տ ձայնն իրագնելու համար, բայց չի հաճում իր նպատակին. լայնաբաց ա-ը չեզոքացնում է լեզուի ճիգը եւ դուք իսկապէս արտասանում էք hա'ար. երկու ա-երի միջեւ զգացւում է մի վոխ եւ համարեա աննշմար տ, աւելի մի փորձ, քան մի լրիւ իրացում: Այնուհետեւ երկու ա-երը ձուլւում են իրար իբր նոյներանգ ձայնաւորներ եւ տալիս են մի երկար ա՛, որ ժամանակին կարճացած է: Նոյներանգ ձայնաւորների ձուլման այս երեւոյթը մենք նկատում ենք նաեւ սանսկրիտի մէջ, ուր a + a, ā + a եւ ā + ā տալիս են մի երկար ā. այսպէս՝ tvam caapi հնչում է իբր tvam cāpi (= դու եւս): Հնդիկ քերականներն այս երեւոյթին ասում են samdi (սանդի): Ձուլման պատճառը խուսափումն է յօրանջքից (hiatus): Նոյն է պատճառը եւ մեր ա-երի ձուլման[2]: Կարծում եմ այս է մեկնութիւնը մեր hար ձեւի ծագման:

Իրաւամբ ենթադրում են, որ հին հայերէնի չեշտը չատ զօրաւոր է եղած (Meillet-Esquisse, էջ 1): Եթէ հիմայ նոյն hատար բառն արտաբերէք միջակ բացութեան ա-ով, կարճ, բայց հայերէնի զօրաւոր չեշտով ու կարճ, դուք կը նկատէք, որ ա-ի արտաբերութիւնը ճկում է զօրաւոր չեշտի տակ եւ արագօրէն իջնում է վար, յօրինելով արաբական ع ձայնին մօտիկ մի հնչիւն, որ մեր յ-ն է: Յ-ի այս հնչումը դեռ պահուած է Փամբակի եւ Շիրակի մի քանի գիւղերում, ուր, օրինակ, «յիմար» բառն արտաբերում են իբր عի'մար: Առաջին ա-ն իր ճկումի ընթացքին հաղորդում է հարեւան տ-ը եւ երբ նրա կցուվրայով բարձրանում է երկրորդ ա-ին կցուելու, այս վերջինն այլ եւս չի արտաբերում իր լրութեամբ. նա դառնում է ը-ին մօտ մի ձայն: Արտաբերութեան այս երկրորդ ձեւը մօտաւորապէս կարելի էր տառադարձել իբր hա'ըր, բայց ոչ ընդհատումով իբր hա'ع-րը, այլ սահուն իբր hա'-յրը: Բուն իսկ արաբերէնի մէջ ع ձայնը միտում է ցոյց տալիս յ դառնալու. այսպէս օրինակ ماء, որ «ջուր»է նչանակում, Եգիպտոսի ընթացիկ արտաբերութեամբ հնչում է մօտաւորապէս իբր móya, իսկ Սուրիայում յաճախ լսւում է իբր máy': Այսպիսով hատար ձեւի միջին տ-ը չի իրանում առաջին ա-ի զօրաւոր չեշտի պատճառով, նրան փոխարինում է ճկման հետեւանքով ծնունդ առած յ-ն: Նոյն զօրաւոր չեշտի պատճառով երկրորդ ա-ը ստանում է ը-ին մօտ երանգ եւ բառը դառնում է hայըր, որ այս ձեւով դեռ կենդանի է բարբառների մէջ: Այսպիսով ոչ թէ տ-ը «դառնում» է յ. նա իր մէջ յ դառնալու ոչ մէկ տարր ունի. այլ «փոխարինւում է» յ-ով: Յ-ն լցնում է տ-ի չիրացման հետեւանքով ստեղծուած յօրանջքը երկու ձայնաւորի միջեւ: Կարծում եմ այս է hայր ձեւի ծագման մեկնութիւնը:

Իսկ եթէ նոյն hատար բառն արտասանէք առաջին ա-ը կարճ, զօրաւոր չեշտով, բայց չեղ, դուք կը նկատէք, որ հանդիպում էք արտաբերական նոյն երեւոյթներին ինչ որ երկրորդ դէպքում: Ձեր արտաբերած ա-երը բաց, բայց չեղ ա-երի երանգ ունին: Այդ երանգը չատ լաւ պահած են Կիւրինցիները. նրանց է-ն մի տեսակ բաց ու չեղ ա է: Երրորդ արտաբերութիւնը կարելի է մօտաւորապէս տառադարձել իբր hէըէր, ուր ը-ը մի խուսափուկ հնչիւն է. նա այնքան թոյլ չէ, որ յօրանջքի զգացում չստեղծէ, բայց եւ այնքան զօրաւոր չէ, որ ընդհատէ կամ եւ հաստատէ արտաբերութիւնը եւ արգելք դառնայ երկու է-երի ձուլման: Այդ խուսափուկ ը-ի վրայից երկու է-երը միանում ու ձուլւում են իրար, տալով մի երկար է՛ — hէ՛ր — որ այնուհետեւ կարճացած է մեր բոլոր ձայնաւորների նման՝ եւ բառը դարձած է hէ՛ր:

Նկատելով է ունեցող բառերի եւ ձեւերի գոյութիւնը գրաբար լեզուի մէջ, պէտք է կարծել, որ ա-երի չեղ արտաբերութիւնը նախագրական երեւոյթ է: Արդեօք այդ արտաբերութեան պատճառը Իրանական գանգուածների դարաւոր հարեւանութի՞ւնն է, թէ դա պէտք է արդինք համարենք մեր վաղեմի արտաբերութեան երկչաւից հոլովոյթի դէպի բաց ու չեղ ա-երը՝ այդ հարցումի պատասխանն այս վայրկեանին դժուարանում եմ տալ: Այսպիսով ես կարծում եմ, որ ամէն տեղ ուր այ խումբն իր զուգահեռն ունի է, այդ է-ի ծագումը պէտք է վերագրել ա-ի չեղ արտաբերութեան:

Մեր մեկնութեանց մէջ մի կէտ կարող է տարակոյսի տեղիք տալ: Մեր երեք ձեւերը — hայր, hար, hէր — ես համարեցի միեւնոյն hատար ձեւից ծագած, որ անչուչտ

---

[1] Տես F. Kluge, Etym. Wört. d. deutsch. Sprache, Vater բառի տակ:

[2] Տես. Ф. И. Кнауеръ — Угебн. санскритск. яз էջ 9: նաեւ A. Carnoy, Gramm. de la langue sanscrite, էջ 47.

© National Library of Armenia

շեշտում էր իր առաջին ա-*ը: Արդ՝ ի՞նչպէս է որ միեւնոյն շեշտը մի տեղ չքացնում է* տ-*ն՝ անհետ կորցնելով, իսկ միւս տեղ* տ-*ը փոխարինում է* յ-*ով: Դրա պատճառը առաջին* ա-*ի բացութեան մէջ պէտք է որոնել: Ճիշտ է, որ երկու դէպքում եւս շեշտուողը մի* ա'*է. ճիշտ է, որ երկու դէպքում եւս շեշտը զօրաւոր է, բայց* ա-*երից մէկը* շատ բաց *է եւ ճոռոմ* (emphatique) *արտաբերութիւն ունի, իսկ միւսը միջակ բացութիւն եւ սովորական արտաբերութիւն ունի. եւ յետոյ՝ մէկը* երկար ա *է, միւսը* կարճ: Ա-*ի բացութիւնն ու երկարութիւնը չեզոքացնում են շեշտի զօրաւոր ճնշումը. ճոռոմ* ա-*ը չի ճկում շեշտի հարուածի տակ, ուստի կարողանում է* տ-*ի վրայով միանալ հետեւորդ* ա-*ին եւ* hա'՛տարը *դառնում է* hա'՛ար > hա'՛ր:

Զուգադրելով մեր դիտողութեանց արդիւնքը՝ մենք կը ստանանք հետեւեալ պատկերը·

հա'տար {
հա'՛տար > հա'ար > հա'՛ր > հա'ր
հա'տար > հա'յար > հա'յըր > հա'յր
պէտք է շարել արաբական մի «համզա»:
հո'տոր > հո'յոր > հոյր > հէ'ր[3]:

Հանենք այս ցուցադրութեան բոլոր հետեւանքները: Այս ցուցադրութիւնից հետեւում է, որ նախագրական հայերէնի համար պէտք է ենթադրել երեք լեզուական միջավայր. երկար եւ մեծաբաց ա-*ի միջավայր, որ տուած է* hար *ձեւը. կարճ եւ միջաբաց* ա-*ի միջավայր, որ տուած է* hայր *ձեւը. կարճ եւ շեղ* ա-*ի միջավայր, որ տուած է* hէր *ձեւը:*

Մենք տեսնում ենք նաեւ, որ hար *ու* hէր *ձեւերը* hայր *ձեւից չեն ծագում. նրանք ոչ թէ* hայր *ձեւի զաւակներն են, այլ նրա քոյրերն են: Երեքը միասին ծագում են մի ընդհանուր նախաձեւից, որ մենք վերականգնեցինք իբր* *hատար:

Տեսնում ենք նաեւ, որ այ *խումբը տալիս է* Է *այն պայմանով, որ* ա-*ը շեղ հնչուի: Այս շեղութիւնը կարող էր ստեղծուել նաեւ* տ-*ի անկումից յետոյ:* Ա-*ը, որ ընդհանուր ամամբաց հնչիւն է. հետեւորդ* յ-*ին միանալու համար պէտք է հակի վար եւ ուրեմն շեղէ իր շիտակ ճամբան, ստանալով* Է-*ի երանգ, եւ տայ մի տեսակ* էյ, *որ հնչուած է* Է:

Ցուցադրութեանս առաջին շարքը քննելով, մենք տեսնում ենք, որ ատա *խումբը* (h[ատա]ր) *տալիս է* ա: *Սրանից հետեւում է, որ բառերի եւ ձեւերի քննութեան ժամանակ պէտք է ուշադրութեան առնել այս պարագան: Եթէ չունենայինք* hայր *բառը ո՞ւմ մտքով կ'անցնէր, որ մեր գաւառական* hար *բառի* ա-*ը մի պարզ հնչիւն չէ. եւ եթէ չլինէր դասական* գայր *ձեւը, ո՞վ կարող էր ասել թէ այսօրուան* գար *ձեւի* ա-*ը մի վաղեմի* այէ: *Քանի որ մեր լեզուն այսօր չի տարբերում երկար ու կարճ ձայնաւորները, մենք ստիպուած ենք ամէն մի* ա-*ի առջեւ հարցնել թէ նա արդեօք մի հին երկար* ա *չէ՞, իսկ սա իր հերթին մի հին* այ *չէ՞. իսկ այդ* այը *չի՞ ծագում մի աւելի հին* ատա *խմբից եւ սա մի* ա + *բաղաձայն* + ա խմբից: *Հար բառի* ա-*ը մեզ կարող է խրատ լինել. տեսանք, որ նա ծագում է մի շատ հին* ատա *խմբից: Փորձառական մեթոդի կիրարկութեան ժամանակ պէտք է ամէն մի* ա *ենթարկել այդ փորձարկութեան: Օտար կցիոները մեզ կարող են մեծապէս նպաստել վերականգնումի մեր ջանքերի մէջ. գոթ.* fadar *կցիոն յենուած էր, որ մենք վերականգնեցինք* hատար *նախաձեւը եւ գտանք* hայր *բառի* ա-*ի ծագման աղբիւրը: Այդ օտար կցիոն էր, որ մեզ մղեց մեր* hար *բառի* ա-*ը վերականգնել նախ իբր* ա՛, *ապա՝* աա, *յետոյ՝* ատա:

Ցուցադրութեանս երկրորդ շարքից երեւում է, որ յր *(այսինքն* յ + *բաղաձայն) խմբի մէջ չքացած է մի վաղեմի ձայնաւոր: Այստեղից հետեւում է, որ այդ կարգի խմբերը պէտք է վերականգնուեին իբր* յ + *ձայնաւոր* + *բաղաձայն: Այս վերականգնած ձայնաւորի շնորհիւ մենք կը ստանանք մի նոր խումբ* Ձ + յ + Ձ *(վերջինը վերականգնածն է. մեր օրինակի մէջ՝* ա + յ + (ա) (h[ա + յ + ա]ր): *Այս նոր խմբի մէջ յատուկ քննութեան պէտք է ենթարկել* յ-*ն թէ նա արդեօք չի՞ փոխարինում մի հին բաղաձայն, ինչպէս մեր օրինակի մէջ, ուր այդ փոխարինուած բաղաձայնը* տ-*է.* hատար > hայար: *Իսկ եթէ մեր քննած բառը կազմութեան այս տարազն ունի.* — Ձ + յ + ը + ր, *ինչպէս օրինակ մեր գաւառական* hայըր *ձեւն է, այն ժամանակ պէտք է քննել թէ այդ ձեւի* ը-*ը ո՞ր մի ձայնաւորի սղումն է: Այսպիսով բոլոր* Ձ + յ + ր *խմբերը պէտք է նկատուեին իբր* Ձ + յ + Ձ + ր *խմբերի ամփոփում.* hայր < hայար. *իսկ նրանց* յ-*երը մեծ մասամբ պէտք է համարուեին վաղեմի չքացած բաղաձայններ.* hայար < hատար:

Ցուցադրութեանս երրորդ շարքից հետեւում է, որ մեր Է-*ն, մի նախաւոր* այէ, *որի* ա-*ը հնչուած է շեղ: Միաժամանակ նրանից հետեւում է, որ նախագրական հայերէնը* Է *հնչիւն չի ունեցած:* Է-*ն պատմական հոլովոյթի արդիւնք է: Բոլոր* Է-*երը կամ եղած են հին* այ-*եր կամ ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք՝ կազմուած են* այ *խմբի օգնութեամբ: Նրանք մեծ մասամբ ծագում են* Ա + Բ + Ձ *խմբերից, ուր վերջին ձայնաւորը սղած ու կորած է.* hատար > hայար > hայր > hէր *(ինքնին հասկանալի է, որ այս շարքի մէջ* ա-*երը շեղ են): Սրանից հետեւում է, որ մեր* Է *ունեցող բառերն ու ձեւերը կարելի է վերականգնել իբր* այ *ունեցող բառ ու ձեւ, իսկ* այ-*ը իբր* ա + բ *մի խումբ. այսպէս՝* «*ասում* Է». — «*ասում* այ» *(որ կենդանի ձեւ է Երեւանի բարբառում). իսկ սա իբր մի վաղեմի* ա'տ-ի: *Հոլովոյթի ծիրն է.* ա'տի > ա'յի > ա'յ ‖ Է': Տ-*ը երկու ձայնաւորի միջեւ եւ շեշտից յետոյ փոխարինուած է* յ-*ով, ինչպէս* hայր *բառի մէջ.* hա'տար > hա'յար > hա'յր ‖ hէ'ր:

Այսպէս է մեր Է *ձայնի ծագման աղբիւրներից մէկը:*

—

Գիտունները մեր Է-*ին վերագրում են ուրիշ ծագում: Մէյէն ասում է, ուր մեր* Ե *եւ* Է *քանակապէս տարբեր չէին, բայց «*Է-*ն աւելի գոց էր քան* Ե-*ը. նա միշտ ծագած է մի հին երկբարբառից եւ ներկայացնում է մի շատ աւելի հին* եյ» Esquisse, *էջ* 19—20): *Քննենք այս խնդիրը մերձուստ:*

Առնենք Է *ունեցող մի բառաձեւ. օրինակ՝* բերել *բայի սահմ. ներկայ եզ. 3-դ դէմքը.* բերէ: *սրա մերձաւոր կցիոներն են հին սլաւ.* bereti *եւ սանսկ.* bhárati *(ռուս.* berétй *ուր* й *չի հնչում, այլ կոչտացնում է նախորդ* t-*ի հնչումը): Արեւելահայն արտաբերում է* բե'րէ, *(Թող)* բե'րի, *շեշտը դարձելով առաջին վանկին ինչպէս սանսկրիտը. իսկ գրական արտաբերութիւնն է* բերէ՛, *շեշտը երկրորդ ձայնաւորի վրայ՝ ինչպէս ռուս ձեւի մէջ: Մեր հին ձեռագիրների մէջ եզ. երրորդ դէմքերը գրուած են* Ե-*ով, իբր* բերե: *Այս գրութիւնը (հետեւապէս նաեւ հին արտաբերութիւնը) պէտք է համարել հին հայոց զօրաւոր շեշտի հետեւանք, որի շնորհիւ բառերի վերջին վանկերն ընկնում էին, ուստի ենթադրական հին* *բերետի *ձեւը ձգելով իր վերջին վանկը, դարձած է* բերե[4]: *Բայց հին է նաեւ* բերէ *գրութիւնը: Նա, որ գրած է* բերե՝ *անշուշտ բառի վերջին լսած է* Ե, *այլապէս կարող էր գրել* բերէ, *քանի որ իր տրամադրութեան տակ էին* Ե'*ւ* Ե-*ը եւ* Է-*ն: Այդպէս եւ նա, որ բառը տառադարձած է իբր* բերէ, *նրան վերջին ձայնը լսած է իբր* Է *եւ տարբերած է* Ե-*ի հնչումից, ուստի եւ գրած է* Է *եւ ոչ թէ* Ե, *ինչ որ կարող էր գրել, եթէ* Ե *լսած լինէր:*

Ե-*ին վերաբերեալ մեր գրութեան մէջ տեսանք, որ այդ ձայնը ձոյլ է. նա մի հին* իա *է: Մեր* բերէ *ձեւը ծագած պէտք է համարել մի նախաւոր* բերեյ *ձեւից համաձայն Մէյէի տեսութեան: Վերջին* Ե-*ը միայն լուծելով իբր* իա, *մենք կը ստանանք* բերի-այ, *որից ամփոփուած է* *բերեյ *ձեւը, իսկ սա դարձած է* բերէ (եյ-է): *Լուծելով սլաւ. ձեւի վերջին* e-*ն իբր* իա *եւ զուգադրելով երեք լեզուների ձեւերը մենք կը ստանանք.*

սնս. bhárati
սլաւ. ber–i–ati
հայ. ber–i–ay

Մեր ձեւն անշուշտ նոյնպէս եղած է սլաւ ձեւի նման bér–i–ati: *Հայր բառի քննութեան ժամանակ մենք տեսանք, որ երկու ձայնաւորի միջեւ եւ շեշտից յետոյ եկող* t-*ը փոխարինուած է* յ-*ով.* hա'տար > hա'յար > hա'յր: *Արդ՝ մեր* բերէ *ձեւը ինչ կերպով եւ շեշտենք, իբր «բե'րէ», թէ «բերէ'», հին* տ-*ը, որ փոխարինուած է* յ-*ով, միշտ ընկնում է երկու ձայնաւորի միջեւ եւ շեշտից յետոյ.* բե'ր-ի-ատի, բեր-ի-ա'տի, *ուստի միջանկեալ* տ-*ը կարող էր փոխարինուիլ եւ իրօք փոխարինուած է* յ-*ով, որով ստացուած է* բեր-ի-ա'յ-ի, *ուր վերջին* ի-*ն ձուլուելով մերձերանդ* յ-*ին տուած է մի* յ *եւ բառն եղած է* բեր-ի-այ, *իսկ սա ամփոփելով* ի-*ն եւ* ա-*ը իբր* Ե, *դարձած է* բերեյ, *որ եւ տուած է* բերէ *ձեւը: Մենք հիմա կարող ենք նորից ցուցադրել երեք ձեւերը·*

սնս. bhár–ati
սլաւ. ber–i–ati
նախահայ ber–i–ati > ber–i–ayi >
ber-i-ay > ber-ey > berē.

Ուշադիր քննելով այս ցուցադրութիւնը մենք տեսնում ենք, որ սանսկրիտ ձեւի բունը պարզ է bhár — *իսկ սլաւ եւ հայ ձեւերի բուներն ածանցաւոր են* — ber–i — *բուների այս ածանցը միանալով դիմակերտ ածանցի ձայնաւորին* — (i + a) — *տուած է* e: *Մէյէի ասելով* բերէ *վերջում հնչում է* Է *այն պատճառով, որ նա մի հին* եյ *է: Մեր լուծումը ցոյց տուեց, որ իրօք երրորդ դէմքի* Է-*ն մի նախաւոր* եյ *է:*

Առնենք մի ուրիշ օրինակ. աշխարհաբար ստոր. անց. 3-դ դէմք տեսնէի, *որ ունինք նաեւ* տեսնայի *ձեւով: Այս բառերի մէջ ես տեսնում եմ մի բաղաձայն լուծ խումբ* — սն —, *ուր մեր տեսութեամբ չքացած է մի հին ձայնաւոր: Գրաբարի «*տեսանեմ*» ձեւը ցոյց է տալիս, որ այդ ձայնաւորն* ա *է: Վերականգնելով չքացած ձայնաւորը եւ զուգադրելով երկու ձեւերը մենք կը ստանանք·*

տեսանէի
**տեսանայի*

ընդունելով, որ առաջին ձեւի Է-*ն մի հին* եյ *է, իսկ* Ե-*ը մի հին* ի-ա, *ես վերականգնում եմ վաղեմի ձեւը եւ զուգադրում իրար.*

տեսան-ի-այի > տեսնէի
տեսան- -այի > տեսնայի:

Մենք նորից տեսնում ենք բուների տարբեր կառուցում ինչպէս առաջին օրինակի

[3] *Շրջուած* ա-*ը* (ɐ) *ցոյց է տալիս շեղ արտաբերութիւն [կարելի է շարել եւ* ä]:

[4] A. Meillet, Esquisse, *էջ* 1,

© National Library of Armenia

մէջ. եւ այդ տարբեր կառուցման հետեւանքով մենք ստանում ենք տարբեր արդիւնք. մի տեղ -էի, մի տեղ՝ -այի. երկուսի մէջ եւս մտնում է նոյն բաղադրիչը -այ, որ ձուլուելով բունի ի-ին՝ տալիս է իայ, իսկ սա եյ, որից՝ է. իսկ երկրորդ ձեւի բունը ի չունենալով, մնում է այ — տեսն — այի: Պարզ է, որ է-ն ծագում է ի-այ խմբից: Բունի նոյն կազմութիւնը նկատելի է եւ ստոր. ներկայ ժամանակի վրայ.

տեսան-ի-ամ > տեսնի-ամ > տեսնեմ.
տեսան -ամ > տեսնամ:

Այս լուծումների հիման վրայ կարող ենք ասել, որ մեր է-ն պէտք է վերականգնուի իբր ի-այ:

Բայց հիմայ քննենք մի ուրիշ է ունեցող ձեւ. բացառական հոլովի է-ն. օրինակ՝ ի սրտէ: Հիմնուելով «սիրտ» եւ «սրտի» ձեւերի վրայ, ես վերականգնում եմ մեր բառի նախաւոր ձեւն իբր *սիրտի, որ միաժամանակ ե՛ւ ուղղական էր ե՛ւ սեռական, նայելով շեշտին. — ուղղ. սի՛րտի > սի՛րտ (ի — չքացած). սեռ. սիրտի՛ > սըրտի՛ > սրտի՛ (ի — սղած): Գրաբար լեզուն պահած է, կարծում եմ, հնագոյն սեռական-բացառականի վերջաւորութիւնները բայց միմիայն յատուկ անունների համար յ-Արամ-այ, ի Հայկ-այ: Հաւատարիմ այս նախագրական աւանդութեան՝ Արցախեցին իր մթին եւ անկոխ ձորերում դեռ ասում է. ընձան-այ, քզան-այ, մզան-այ, այսինքն ինձանից, քեզանից, մեզանից: Ահաւասիկ այս ածանցն է, որ միանալով բառի հին ուղղական ձեւին՝ տալիս է բացառականի է-ն. այսպէս՝ սիրտի + այ > սրտեյ > սրտէ. բանի-այ > բանեյ > բանէ: Ուրեմն նաեւ ա՛յստեղ մեր է-ն մի նախաւոր ի-այ է: Այս հիման վրայ է, որ իրեայ (հրե՛այ) սեռակ. տալիս է իրէի. եւ ընդհակառակն Հռիփսիմէ (իայ), սեռ. տալիս է Հռիփսիմեայ (իայ). այսինքն սեռ. եւ ուղղակ. միեւնոյն ձեւերն են:

Գրաբարն ունի սմանէ, դմանէ, նմանէ, որ պէտք է վերականգնել իբր *սմանայ, *դմանայ, *նմանայ. այս շարքին զուգահեռ է Արցախեցու սրանայ, դրանայ, նրանայ, որ ինչպէս տեսնում էք աւելի հին կերպարանք ունին քան գրաբար ձեւերը. սրանց այ խմբերը դեռ չեն ամփոփուած:

Մենք հիմա վերջնապէս կարող ենք ասել, որ մեր է-ն ձոյլ ձայնաւոր է. որ մեր հնագոյն լեզուն է ունեցած չէ. որ մեր բոլոր է-երը կամ այ են կամ ի-այ, հետեւապէս այդ կերպարանքով պիտի վերականգնուեն: Գրերի գիւտի ժամանակ մենք ունեցած ենք է ձայնը, որ տարբեր արժէք է ունեցած քան ե-ը, ուստի եւ յատուկ գիր է հնարուած նրա համար. բայց ինչպէս նախագրական հայերէնը ե չի ունեցած, այնպէս չի ունեցած նաեւ է: Այդպէս է սանսկրիտը. նա կարճ e չունի. իսկ իր ունեցած երկար ē-ն մի նախաւոր ai է: Երբ սանսկրիտը գրի առնուեց՝ է ձայնը արդէն գոյութիւն ունէր, ուստի եւ յատուկ գիր է հնարուած նրա համար: Բայց այդ ձայնը արտաբերական հոլովոյթի արդիւնք է. նախապէս նա գոյութիւն ունեցած չէ. նա մի ձոյլ ai է, ինչպէս մեր է-ն, որ մի այ էր երբեմն կամ ի-այ:

—

Մենք կարող ենք հիմա մեր ե-ի տեսութեան մի նոր ապացոյց տալ, միաժամանակ մեկնելով մի փոխանցում. — է/ի, — սէր — սիրոյ: — Լեզուագէտները վկայում են փոխանցման փաստը առանց մեկնութեան:

Հարցում. — ի՞նչ է ե-ը. նա մի պարզ հնչի՞ւն է, թէ իա խմբի ձուլում: Եւ ի՞նչ է է-ն, նա մի եյ է թէ մի ի-այ: Ես ասում եմ. միմիայն այն դէպքում երբ ընդունենք թէ ե-ը մի ձոյլ իա է, իսկ է-ն մի ամփոփ ի-այ՝ մենք կարող ենք բանաւոր մեկնութիւն տալ է/ի փոխանցումին:

Այսպէս, օրինակ, առնենք տէր բառը, որ ունի տիրոջ ձեւով սեռական: Կարծում եմ, որ նա ունեցած է եւ տիրոյ ձեւով սեռական, որ կենդանի է բարբառների մէջ տիրու ձեւով: Գիւղացին հայհոյելիս ասում է. «քու տիրու...». հմմ. որդոյ — որդու[5]: Տէր բառը համարւում է մի նախաւոր տի-այր ձեւի ամփոփում: Այս լուծումն ընդունում է նաեւ Մէյէն (Esquisse, էջ 24): Այս լուծումն ինքնին եւ Մէյէի այն տեսութիւնը թէ մեր է-ն մի նախաւոր եյ է, արդէն ցոյց են տալիս, թէ մեր ե-ը մի նախաւոր իա է. տի-այր > տեյր (իա > ե) > տէր: Տիրոջ ձեւի մէջ տիր — բունը ծագում է տէր ձեւից, իսկ սա տեսանք, որ մի վաղեմի տի-այր է: Մենք կարող ենք ուրեմն սեռական ձեւերը վերականգնել իբր տի-այր-ոջ, տի-այր-ոյ(ու):

Ե-ին վերաբերեալ մեր գրութեան մէջ (Հանդ. Ամս. 1930, 5—6) մենք տուինք ձայնակազմութեան եւ փոխանցումների մի քանի տարազներ, որոնցից մէկ էր. ía > íy > í: Արդ՝ տիայր ձեւի մէջ իա խումբը կարող էր շեշտուիլ իբր ի՛ա (ía): Այս շեշտառութեան հետեւանքով նա պիտի դառնար ի՛՛յ (íy): Սրա յ-ն ձուլուելով հետեւորդ յ-ի հետ, պիտի տար մի յ, իսկ սրան պիտի կլանէր նոյներանդ եւ շեշտուած ի՛-ն եւ երկար էր: Այդ սոսացական երկարութիւնը պիտի կորչէր ժամանակին եւ մնար մի կարճ եւ շեշտուած ի: Ահաւասիկ այս փոխանցումների ծիրը. տի՛-այր > տի՛՛յյր > տի՛՛յր > տի՛ր: Արեւելահայն արտաբերում է տի՛րոջ, տի՛րու. եւ ա՛յդ է բառերի պատմական շեշտը, որ բանաւոր մեկնութիւն է տալիս է/ի փոխանցումին: Այս փոխանցման մէջ վճռական դեր խաղացողը ե-ի բաղադրիչ ի-ն է եւ նրա շեշտն է, որ ստիպում է հետեւորդ ա-ին սղիլ. այնուհետեւ ազդում է նոյներանդ եւ մերձերանդ ձայնաւորների սղման օրէնքը. ի՛ա > ի՛յ. — ի՛յ + յ > ի՛յ > ի՛: Ի-ն, երբ պարզ է, ոչ մէկ տարր ունի, որ փոխանցումով ի դառնալ կարենայ. բայց է-ն, երբ ձոյլ ի-այ, այդ տարրն ունի իր մէջ. դա նրա ի-ն է, որ շեշտի ազդեցութեան տակ մնում է անվթար, զոհելով հետեւորդ ա-ն ու յ-ն. ի՛-այ > ի՛յ > ի՛: Այստեղից հետեւում է, որ բոլոր է/ի փոխանցում ունեցող բառերի ու ձեւերի է-ն պէտք է վերականգնել իբր եյ, այսինքն՝ իբր ի-այ:

Եզրափակենք.

1. Նախագրական վաղեմի հայերէնն ունեցած է կարճ ու երկար ա-եր, որ տարբեր լեզուական միջավայրերի մէջ արտաբերուած են մեծաբաց, միջակ եւ չեղ արտասանութեամբ:

2. Նախագրական հայերէնը է չի ունեցած. է-ն մի ձոյլ ձայն է. նա կամ մի այ է, որի ա-ը հնչուած է չեղ կամ մի հին ի-այ է:

3. Դասական շրջանի կարճ ա-երը կարող են ծագած լինել երկար ա-երից իսկ սրանք իրենց հերթին ծագած լինել ա + բ + ա խմբերից:

Այստեղից հետեւում են մեթոդական ցուցումներ: Է ունեցող բոլոր բառերն ու ձեւերը պէտք է վերականգնուեն իբր այ կամ ի-այ ունեցող բառ ու ձեւ: Պէտք է յատուկ քննութեան առնել այդ խմբերի յ-երը եւ տեսնել թէ ի՞նչ բաղաձայն են փոխարինում: Վերականգնուած ձեւերը միայն պէտք է համեմատութեան դրուին օտար կչիռների հետ, նախապէս նոյն աշխատանքը կատարելով եւ նրանց վրայ: Այնուհետեւ դիւրին է գծել հնչական եւ իմաստական հոլովոյթի ծիրը:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

[5] Ժողովրդական երգն ասում է.

Արի սիրուն, գնա սիրուն,
Հազար էրանի քու տիրուն:

ՀԱՅԵՐԷՆԻ ՆՈՐ ԱՄԲԻՈՆ-ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Եւրոպայի նշանաւոր մայրաքաղաքներից մէկում, հանդստաւէտ, գեղեցիկ Բրիւքսէլում, բացւում է համալսարանական մի նոր ամբիոն Հայագիտութեան: Բայց նախ երկու խօսք բուն համալսարանի մասին, որ իր ծագումով ու վիճակով մեծապէս տարբերւում է սովորական պետական համալսարաններից:

Բրիւքսէլի այս բարձրագոյն կրթական հաստատութիւնը կոչւում է «Ազատ Համալսարան» (Université libre), որովհետեւ հիմնուած է ոչ թէ պետական միջոցներով եւ պետութեան հսկողութեան տակ, այլ մասնաւոր, ուսումնասէր մի անհատի նախաձեռնութեամբ եւ երկար ժամանակ պահպանուել է Բրիւքսէլ քաղաքի եւ քաղաքացիների ընձեռած միջոցներով: Վերջերս միայն Բելգիական կառավարութիւնը պետական բիւջէից յատկացրած է տարեկան 10 միլիոն ֆրանք նրա պահպանութեանը եւ համալսարանն ընդունած է պաշտօնական ուսման ծրագիրը: Միայն թէ նա դեռեւս «ազատ» է, որովհետեւ ուսուցչապետները շարունակում են ընտրուիլ ոչ թէ Կրթական մինիստրութեան՝ այլ Համալսարանի խորհրդի կողմից: Բրիւքսէլում ուրիշ համալսարան չկայ:

Մօտ 100 տարի է անցել այն օրից երբ մի զարգացած եւ ազատամիտ Բելգիացի՝ Թէոդոր Վէրհագէն (Verhaegen), որի արձանը կանգնուած է համալսարանի շինութեան առջեւ, դրել է այս բարձրագոյն դպրոցի հիմը: Առաջին տարիներն իսկ կազմակերպուել են աւանդական 4 ճիւղերը: 1. Փիլիսոփայութեան եւ Գրականութեան (Faculté de Philosophie et de Lettres), 2. Իրաւագիտութեան (Droit), 3. Գիտութեանց (Sciences) եւ 4. Բժշկական (Médecine): Բաւական ուշ, հիմնուել է նրա հինգերորդ ճիւղը՝ Բազմարուեստից Դպրոցը (Ecole Polytechnique) իբրեւ Faculté des Sciences appliquées, որ նշանաւոր ճարտարագէտներ (ingénieur) է տուել Բելգիային: Հետզհետէ՝ տարիների ընթացքում աւելացել են համալսարանի նոր բաժանմունքները՝ Institut de Botanique (Բուսաբանութեան), Institut de Physiologie (Բնախօսութեան) եւ Institut d'Hygiène, de Bactéréologie et de Thérapeutique (Առողջապահութեան, Մանրէաբանութեան եւ Ախտաբուժութեան): Այնուհետեւ՝ Քաղաքական Ընկերական Գիտութեանց Դպրոցն (Ecole des Scienses politiques et Sociales), որ 1902ին վերածուել է Institut de Sociologieի եւ վերջապէս 1904ի, աւելացել է Առեւտրականը (Ecole de Commerce):

Ազատ համալսարանի ուսանողների թիւն այսօր 2300ից անցնում է, որոնց մէջ կան

© National Library of Armenia